ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 781 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 21-Ի N 219-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը՝

1. Սահմանել, որ Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02565835) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2023 թվականի մարտի 21-ի «Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից իրականացվող «Կենսաբազմազանության պահպանության և բնապահպանական կրթության ազգային կենտրոն» ծրագրի մասին» N 219-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Երևան տելեկոմ սոլուշնս» փակ բաժնետիրական ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 00930215) 2026 թվականի նոյեմբերի 6-ին կնքված՝ N 56-26-Վ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 24-պորտային միացման վահանակների մատակարարում և դրանց մոդուլների մալուխների միացման աշխատանքների իրականացում՝ 714,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Մարշալ լենդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 00446451) 2026 թվականի նոյեմբերի 4-ին կնքված՝ N 54-26-Վ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է անվադողերի ու դրանց պարագաների ձեռքբերում՝ 2,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Մարշալ լենդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 00446451) 2026 թվականի նոյեմբերի 4-ին կնքված՝ N 32-26 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է անվադողերի տեղադրման և սպասարկման ծառայությունների մատուցում՝ 1,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Մարտիկ Մանուկյան Ձիվանի» անհատ ձեռնարկատերի հետ (ՀՎՀՀ՝ 46411813) 2026 թվականի նոյեմբերի 6-ին կնքված՝ N 26-57-Վ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բենզինի և դիզելային վառելիքի ձեռքբերում՝ 5,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

26.11.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ